

ՌՈՒՍԱԿԱՆ ՕՐԻԵՆՏԱՑԻԱՆ

Գրեց՝ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

I

ՌՈՒՍԱԿԱՆ օրիենտալիստի, հակումի խընդիրը հայ քաղաքական կեանքի ամենէն ծանրակշիռ հարցերէն մէկը եղած է անցեալի մէջ, եւ նոյնքան ու աւելի ծանրակշիռ կը մնայ այսօր եւս :

Հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան եւ ազատագրութեան բնագոյրը դայն մղած է հակուելու ուստական հզօր պետութեան կողմը իր Ֆիզիքական փրկութեան համար՝ անլրնյայտնիօրէն, իսկ քաղաքական ազատութիւնը սնուցած է աղօտօրէն սրտի խորքը : Հայ ժողովուրդի հոռի զանգուածները, հայրենի երկրի մէջ, վերջին դարերու ընթացքին, այս բնագոյրը արտացոլացուցած են, ամէն անգամ, երբ Հիւսիսի ծաւալուն ուժը, կամ Արեւմտեան պետութիւնները պարսկական եւ թրքական տիրապետութիւնը ջախջախելու եւ հայկական բարձրաւանդակէն դուրս քշելու մտադրութիւն մը ունեցած են : Ընդհակառակը, երբ մեծ պետութիւններու շարժումներու նպատակակէտը այլ կողմ ուղղուած է, հայ հաւաքականութեան բնագոյրը եղած է վերսպահ, կծկուած է ինքն իր վրայ եւ համբերութեամբ սպասած է :

Հայ քաղաքական միտքը սակայն, հետեւելով հանդերձ հայ զանգուածներու բնագոյրին, չատ յաճախ չեղումներ եւ խաչաձեւումներ ըրած է : Այս աններդաշնակութեան հիմնական պատճառն այն է, որ հայ քաղաքական մտքի ղեկավար տարրի գերակշռութիւնը հայրենի երկրէն դուրս կը գտնուէր :

Հայկական ազատագրական, յեղափոխական շարժումը, իր հիմնական դժերու մէջ, հետամտած է հասնելու դրութեան մը, ուր քայքայման եւ բաժանման ենթակայ երկու իսլամական կայսրութիւններու թուրք-թաթարական լաւան պիտի վերանար հայ երկրէն :

Թուրք-թաթարական տիրապետութեան մասին յատկապէս կը շեշտեմ, ընդգծելու համար այն խոշոր իրողութիւնը, որ Պարսկաստանի իշխանութիւնը Կովկասի եւ Հայաստանի

վրայ թուրք-թաթարական էր, եւ պարսիկ պաշտօնեան տիրապետող այդ աղբերու ներկայացուցիչն էր միայն :

Այսպիսով, հայ ժողովուրդի ազատագրական-քաղաքական եւ տնտեսական պայքարն ուղղուած էր քուրճ-քարաքան զանգուածին դէմ, եւ այդպէս ալ կը մնայ մինչեւ այսօր :

Տարբերու այս խուլ ու անողոք պայքարը պայծառօրէն ըմբռնուած ու գնահատուած չէր անցեալի մէջ, եւ տակաւին կատարեալ յատուկութեամբ ըմբռնուած չէ : Այս յատուկ ըմբռնումն անհրաժեշտ էր, որպէսզի կարելի ըլլար ճշգրէ նաեւ հայ ժողովուրդի բուն իր ուղղութեան ելակետը : Որովհետեւ առանց ելակէտի, անիմաստ ու անօգուտ կը դառնայ որեւէ օրիենտալիստի մասին մտածելն ու վիճարանիլը :

Արդ, դարերու ընթացքին հայ ժողովուրդը, ըլլայ պարսկական կամ թրքական տիրապետութեան տակ, թուրք-թաթարական տարրին հետ խաղաղ կենանակցութեան ճանապարհը չէ կրցած գտնել : Դասակարգային, ազգային-քաղաքական, կրօնական եւ մշակութային գեանի վրայ հայն ու թուրք-թաթարը դուրսհեռ զիժ մը չեն ունեցած եւ չեն կրնար ալ ունենալ : Դարերու փորձառութեանն ու անասելի տառապանքներէն յետոյ, հայ ժողովուրդի հոգու մէջ կուտակուած է հակամարտութեան գրգռումն ու զիտակցութիւնը, եւ դոյացած է այն կատարեալ համոզումը (որ անվերաքննելի է), թէ հայ տարրը պիտի բաժնուի եւ ազատուի քուրճ-քարաքան տարրէն, եւ հետեւաբար՝ անոր հետ եկող որեւէ իշխանութեան :

Հայ ժողովուրդի ազատագրական պայքարը, մինչեւ մեր մօտաւոր անցեալը, զլիաւորաբար ուղղուած էր կառավարական վարչաձեւերու եւ տիրապետող ժողովուրդի քաղաքականութեան դէմ, ընդհանուր կարգով, հասնելու բարենորոգումներու, անդական ինքնավարութեան եւ զիժոկրատիկ կարգ ու սար-